



86. ՄԱՐԱԼԸ

Ճընապովը մին կնիկ էր քինըմ, բոյը՝ սանլի չինար, ունքերը՝ կանանչ-կարմիրի մնան կեռ, մին խոսքով՝ համ ինքն էր մարալ, համ էլ անըմն էր Մարալ: Մին ջնհիլ հենց որ տեսավ էս Մարալին, ընգավ եննեն: Շտեղ քինըմ էր, ինքն էլ եննիցը:

Մարալը շուռ եկավ, հըրցրեց.—*Խի՞ ես ընգել քամակիցըս, խի՞ չես քինըմ քու պանին:*

—Ախր *ոնց քինամ, սուրաթըտ հոնչ ու միտկըս տարել ա, ես քեզ սիրըմ եմ, ա՛յ մարալ, մարալի՛ բալա:*

Կնիկը ծիծանդեց հու ասավ.—Ախր ես *ի՞նչ մարալ եմ, որ ասըմ ես: Իրեւմ ա՛ մարալ չես տեսել: Մարալը հեն ա եննիցս կնլիս ա: Աչկերը քըչերվա երգընքի պես սև են, բոյը՝ չինարի, իրեսը նորած լոսնյակ: Էն հարիր անքամ համ ինձանա նախշուն ա, համ էլ ինձանա կուճիր ա, համ ինքն ա գոգնլ, համ էլ անըմն ա Գոգնլ:*

Ջնհիլը խելքը կորցրած շուռ եկավ, վազ տվավ Գոգնլին տեսնալի:

Շատ վազ տվավ, թն քիչ, Աստոծ գիղն, մին էլ տեսավ ճնապովը մին պառավ ա զոռով-գիջով անդըմը փոխըմ:

Թքեց ուրն խելքի վրեն էլ, պառավի վրեն էլ, աջըղված ետ եկավ, որ Մարալին մին քանի կծու խոսկ ասի: Եկավ, եկավ, մին էլ տեսավ՝ Մարալը հեսա անպրի կոխկին նստած, մին քանի լավաչ, մին դաստա տանխծը, մին քանի էլ ծու առաչին տրած անուշ ա անըմ:

Հենց ուզեց պերանը պնց անի, Մարալը՝ թն.—*Նստի՛, անծանոթ տղա, հա՛ց կեր, —*ասավ ու մին ներկած, մին էլ մին չընեղկած ծու հացի հետ թնվնգն արավ ընդրան:

Ջնհիլը համ սոված էր, համ էլ Մարալի տվածիցը ո՞վ կարար ետ կաղնիլ: Սկսեց ուտիլը, համ էլ հըրցնիլը:

—*Էտ խի՞ ինձ խափեցիր, մարա՛լ ախճիկ:*

—*Հնլն կե՛ր, եղո կասեմ:*

Կերավ պրծավ, Մարալը՝ թն̄.— Դե ասա՛, ինչ թաքաղութ կար
ներկած ու չըներկած ծրվերի մեջ:

—Ոչ մի թաքաղութ, ծնն̄ն ծնն̄ յա, էլի:

—Այ ապրի՛ արեւոտ, Հիմիկ խոսկի ջուղաբը լսի՛: Ոչ թն̄ ես քե
խափեցի, այլ տն̄ն ինձ խափեցիր: Թն̄ որ ես տուրջտ եկել ի, դորթ-
դան ինձ սիրըմ իր, խի՞ տոտինգ տվար դքա մին հւրիչը: Ախպե՛ր
ջան, ախճիկն էլ ծվի մնան ա, ներկած ա, թն̄ ներկած չի, մին ա,
թաքաղութ չըկա: Ուզըմ ա, մարալ ինի, ուզըմ ա՛ գոգնոլ, Հն̄մին
պն̄նն ա: Էսքանը թն̄ Հիմիկվանից կլխի ընգար, էն ա մին Հալալ
կաթնակեր կըճարես, կարքին կապրես, թն̄ չէ՛ էն ա ըսօրվա պես
մինիցը-մինը էսքան վազ կըտաս, որ նմփնսըտ ճընապի կեսին
կըկտրվի:

